



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՅՆՎՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մամլո հաղորդագրություն

Հասցե՝ ք. Երևան, 0010, Նալբանդյան 13
Էլ փոստ՝ info@ssa.am
Հեռ.՝ (060) 654 013, (010) 52 15 94
Ծառայության պետի օգնական՝
Գրիշա Կոստանյան, Հեռ.՝ (060) 654 011
Կազմակերպությունների և քաղաքացիների հետ
համագործակցության բաժնի պետ՝
Նոնա Սարգսյան, Հեռ.՝ (060) 654 020, (095) 51 14 17

Ծառայության պետի աշխատանքային այցը Արցախի Հանրապետություն

Սոցիալական ապահովության ծառայության պետ Ա. Բոշյանի գլխավորած Ծառայության պատվիրակությունը ս.թ. հուլիսի 12-13-ին Արցախի Հանրապետությունում էր: Հայաստանի պատվիրակությունը, որի կազմում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ս. Սախյանը, հանդիպել է ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար Սամվել Ավանեսյանին և ոլորտի այլ պատասխանատուների, որոնց հետ քննարկվել են Արցախում սոցիալական ապահովության ոլորտին վերաբերող մի շարք հարցեր և խնդիրներ, մասնավորապես՝ Արցախում վերջերս ներդրված «ԷԼԿԵՆՍԱԹՈՂԱԿ» տեղեկատվական համակարգի շահագործմանն ու կատարելագործմանը վերաբերող հարցեր:

Հայաստանի պատվիրակությանն ընդունել է նաև Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը:

Ոլորտի պատասխանատուների հանդիպմանը բարեփոխումների շուրջ քննարկումների ընթացքում անդրադարձ է եղել հաշմանդամության կարգի հստակեցմանը, կենսաթոշակների բարձրացմանը և եկամտահարկի վերանայմանը վերաբերող հարցերին:

Ծառայության պետ Ա. Բոշյանն ընդգծել է, որ Ծառայության անձնակազմը պատրաստ է բացի մասնագիտական խորհրդատվական աշխատանքներից, գործնական հարցերում ևս շոշափելի աջակցություն ցուցաբերել Արցախի գործընկերներին: